# Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-273-9.09.2019-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

| N | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| **1.** | **2.** | **3.** | **4.** | **5.** | **6.** |
| **1.** | ՀՀ կառավարություն | նախագծի 1-ին հոդվածը լրացնել 1-ին մասով | Նախագծի 1-ին հոդվածը լրացնել 1-ին մասով հետևյալ բովանդակությամբ՝ « Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի՝<br><br>4.1-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ .<br>« 4.1 Սույն օրենսգրքով իրական սեփականատերերի հայտարարագրի կամ իրական սեփականատերերի վերաբերյալ փոփոխված տեղեկությունների վերաբերյալ քաղվածք ներկայացնելու պարտավորություն ունեցող իրավաբանական անձանց դեպքում իրական սեփականատերերի հայտարարագիր լրացնելիս իրական սեփականատեր են համարվում նաև տվյալ ընկերության կառավարման միանձնյա և կոլեգիալ մարմինների (բաժնետերերի ժողով, խորհուրդ և գործադիր մարմին) անդամ ֆիզիկական անձինք.»: | Ընդունվել է | Ընդունվել է |
| **2.** | ՀՀ կառավարություն | Նախագծի 8-րդ հոդված | Նախագծի 8-րդ հոդվածը լրացնել հետևյալ նոր բովանդակությամբ 1-6-րդ | Ընդունվել է | Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | մասերով.<br><br>«1. 2-րդ մասի «10-օրյա» բառերը փոխարինել « 20 օրյա» բառերով, իսկ « 30-օրյա» բառերը փոխարինել « 30 աշխատանքային օրյա» բառերով,<br><br>2. 3-րդ մասի «30-օրյա» բառերը փոխարինել « 30 աշխատանքային օրյա» բառերով,<br><br>3. 4-րդ մասի «դիմումի գրանցման օրվանից հետո՝ 60-օրյա» բառերը փոխարինել « 20-օրյա» բառերով:<br><br>4. 6-րդ մասում «լիազոր մարմինը 10-օրյա» բառերը փոխարինել «լիազոր մարմինը 20-օրյա» բառերով:»: | | |
| **3.** | ՀՀ կառավարություն | Օրենսգրքի 47-րդ հոդված | Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ հոդվածով<br><br>**«**ՀՈԴՎԱԾ 11. Օրենսգրքի 47-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանադակությամբ 2-րդ մասով.<br><br>«2. Երկրաբանական ուսումնասիրության համար անհրաժեշտ փորձնական հանույթի ֆիզիկական ծավալները սահմանում է լիազոր մարմինը :»: | Ընդունվել է | Ընդունվել է |
| **4.** | ՀՀ կառավարություն | Նախագծի 15-րդ հոդված | Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 15-րդ հոդվածով 1-6-րդ `<br><br>**«**Հոդված 15**.** Օրենսգրքի 51-րդ հոդվածի՝<br><br>1. 2-րդ մասի «10-օրյա» բառերը | Ընդունվել է | Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | փոխարինել « մինչև 40-օրյա» բառերով:<br>2. 3-րդ մասի «10-օրյա» բառերը փոխարինել «մինչև 40-օրյա» բառերով:<br>3. 4-րդ մասի «100-օրյա» բառերը փոխարինել «մինչև 60 աշխատանքային օրյա» բառերով:<br>4. 5-րդ մասի «100-օրյա» բառերը փոխարինել «մինչև 60 աշխատանքային օրյա» բառերով:<br>5. 8-րդ մասի «դիմումի գրանցման օրվանից հետո՝ մինչև 180-օրյա» բառերը փոխարինել « մինչև 25-օրյա» բառերով:<br>6. 9-րդ մասի «օրվանից հետո՝ 10-օրյա» բառը փոխարինել «մինչև 40-օրյա» բառերով:»: | | |
| **5.** | ՀՀ կառավարություն | Օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մաս | 2019թվականի ապրիլը 23-ՀՕ-24-Ն օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի «2019 թվականի նոյեմբերի 30-ը» բառերը առաջարկվում է փոխարինել «2020 թվականի հունվարի 30-ը» բառերով: | Ընդունվել է | Ընդունվել է |
| **6.** | ՀՀ կառավարություն | նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մաս | նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասում «30-օրյա» բառերից առաջ լրացնել «մինչև» բառը և 4-րդ մասում «20-օրյա» բառերից առաջ լրացնել «մինչև» բառը: | Ընդունվել է | Ընդունվել է |